

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

**▶B** Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ  
94/63/ԵՀ հրահանգ

Բենզինի պահման և փոխաբեռնման կայանից մինչև լցակայաններ բաշխման  
հետևանքով առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների արտանետումների  
հսկողության մասին)

(ՊՏ L 365, 31.12.1994թ., էջ 24)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

թիվ էջ ամսաթիվ

- |            |   |       |   |              |
|------------|---|-------|---|--------------|
| <b>▶M1</b> | Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003/ԵՀ կանոնակարգով | L 284 | 1 | 31.10.2003թ. |
| <b>▼M2</b> | Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008/ԵՀ կանոնակարգով | L 311 | 1 | 21.11.2008թ. |

## **▼B**

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/63/ԵՀ հրահանգ

Բենզինի պահման և փոխաբեռնման կայանից մինչև լցակայաններ բաշխման հետևանքով առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների արտանետումների հսկողության մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագիրը և, մասնավորապես, դրա 100-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան (3),

քանի որ շրջակա միջավայրի պաշտպանության մասին Եվրոպական համայնքների հերթական գործողությունների ծրագրով շեշտը դրվել է մթնոլորտային աղտոտման կանխարգելման և նվազեցման կարևորության վրա,

քանի որ Համայնքում բենզինից և լուծիչներից ցնդող օրգանական միացությունների (VOCներ) արտանետումը պետք է տարեկան կազմի 100 մլն տոննա, եթե ոչ մի հսկողական միջոցառում չի ձեռնարկվել, քանի որ ցնդող օրգանական միացությունների արտանետումները նպաստում են այնպիսի լուսաքիմիական օքսիդիչների, ինչպես օրինակ՝ օզոնի գոյացմանը, որը բարձր կոնցենտրացիայի/խտության դեպքում կարող է վնաս հասցնել մարդու առողջությանը, ինչպես նաև վնաս հասցնել բուսական աշխարհին և նյութերին, և քանի որ բենզինից ցնդող օրգանական միացություններից մի քանիսը դասակարգվում են որպես թունավոր, քաղցկեղածին կամ արատածին (տերատոգեն),

քանի որ 1992 թվականի ապրիլի 2-ին Համայնքը ստորագրել է ցնդող օրգանական միացությունների արտանետումների (VOCներ) կամ դրանց միջսահմանային հոսքերի հսկողությանը վերաբերող՝ «Մեծ հեռավորությունների վրա օդի միջսահմանային

աղտոտվածության մասին» 1979 կոնվենցիայի արձանագրություն, որով նախատեսում է ցնդող օրգանական միացությունների արտանետումների զգալի նվազում,

քանի որ ցնդող օրգանական միացությունների արտանետումների ընդհանուր նվազեցմանն ուղղված ռազմավարությունում Համայնքում կարևոր քայլ է ձեռնարկվել՝ ավտոմեքենաների արտանետումներից մթնոլորտային աղտոտման դեմ ուղղվելիք միջոցներին առնչվող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին թիվ 70/220/ԵՏՀ հրահանգը փոփոխելու վերաբերյալ Խորհրդի 1991 թվականի հունիսի 26-ի 91/441/ԵՏՀ հրահանգով ([5](#)), որի նպատակը 10- 15 տարվա ընթացքում մոտավորապես մինչև 80-90 % արտանետիչ խողովակներով արտանետված գազից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և ավտոմեքենաներից գոլորշու արտանետումները նվազեցնելն է, որոնք կազմում են մարդածին ցնդող օրգանական միացությունների՝ մթնոլորտ առկա արտանետումների մոտավորապես 40%-ը, և քանի որ այդ հրահանգի ընդունման ժամանակահատվածում Հանձնաժողովը պետք է հրահանգի մասով առաջարկություն ներկայացնել շարժիչային վառելիքի պահման և բաշխման ընթացքի բոլոր փուլերում գոլորշիացման հետևանքով կորուստները նվազեցնելուն ուղղված միջոցառումների մասին,

քանի որ բենզինի պահման և բաշխման համակարգից ցնդող օրգանական միացությունների արտանետումները կազմում են տարեկան մոտավորապես 500 000 տոննա կամ Համայնքում մարդածին ցնդող օրգանական միացությունների ընդհանուր արտանետումների մոտավորապես 5 %-ը, և քանի որ այդ արտանետումները զգալիորեն նպաստում են հատկապես քաղաքային տարածքներում մթնոլորտի աղտոտմանը,

քանի որ գործող տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է ապահովել բենզինի բաշխման համակարգում գոլորշիացման հետևանքով կորուստների զգալի նվազում, ինչպես նաև ոչ պակաս կարևոր՝ գոլորշիների հավաքման միջոցով, որոնք արտանդվում են,

քանի որ միջազգային ստանդարտացման և նավերը բեռնելու ժամանակ անվտանգության հիմունքներով Միջազգային ծովային կազմակերպության մակարդակով պետք է ստանդարտներ սահմանվեն՝ գոլորշիների հսկողության համար և հավաքման համակարգեր՝ բեռնման հարմարանքների ու նավերի նկատմամբ կիրառելու համար, քանի որ Համայնքը պետք է, այսպիսով, ջանքեր գործադրի՝ ապահովելու, որ անհրաժեշտ դրույթներ ներմուծվեն՝ «Նավերից աղտոտման կանխարգելման մասին» միջազգային

կոնվենցիայում՝ այդ կոնվենցիայի ներկայիս վերանայման ժամանակ, որը նախատեսվում է ամփոփել 1996 թվականին, և քանի որ, եթե Նավերից աղտոտման կանխարգելման մասին միջազգային կոնվենցիան չվերանայվի, Համայնքը՝ իր խոշոր առևտրային գործընկերների հետ քննարկումից հետո պետք է համապատասխան միջոցներ առաջարկի՝ նավերի և նավերը սպասարկող նավահանգստային կայանքի նկատմամբ կիրառելու համար (6),

քանի որ լցակայաններում վերալցավորման աշխատանքների ժամանակ գոլորշու այն արտանետումները նվազեցնելու համար կպահանջվեն լրացուցիչ աշխատանքներ, որոնք ներկայումս կազմում են տարեկան 200 000 տոննա՝ դրանով իսկ բենզինի բաշխման ընթացքում հսկելով գոլորշու բոլոր արտանետումները,

քանի որ մրցակցության խաթարումից խուսափելու նպատակով և ներքին շուկայի աշխատանքն ապահովելու նպատակով, անհրաժեշտ է ներդաշնակեցնել շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանության հիման վրա բենզինի բաշխման մասով կոնկրետ միջոցառումները,

քանի որ, այնուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել այն արտոնությունները և բեռները, որոնք կարող են բխել գործողությունից կամ գործողության բացակայությունից, քանի որ, ուստի, նպատակահարմար է որոշ դեպքերում նախատեսել շեղումների և երբեմն բացառումների հնարավորություն, և քանի որ որոշ անդամ պետությունների նաև պետք է առավել երկար ժամանակահատվածների հնարավորություն ընձեռվի, որի ընթացքում կարող են հարմարվել՝ հաշվի առնելու համար տարբեր տեսակի խոշոր բնապահպանական միջոցառումները, որոնք նրանք արդեն հնարավոր է ընդունել են այդ տարածքում կամ, իրենց ցանցերի կառուցվածքից ելնելով, սույն Հրահանգում միջոցառումներով սահմանվող կոնկրետ բեռը,

քանի որ Համայնքի մակարդակով գործողություններ ձեռնարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել Համայնքի տարբեր տարածքներում շրջակա միջավայրի պայմանները, և քանի որ այս կապակցությամբ անդամ պետությունները պետք է կարողանան խթանել կամ պարտադրել ստացիոնար կայանքներից գոլորշու կորուստների հետ կապված առավել խիստ միջոցներ՝ իրենց տարածքում կամ այն աշխարհագրական տարածքներում, որտեղ այն տեղակայված է, որ այդ միջոցներն անհրաժեշտ են մարդու առողջության կամ շրջակա միջավայրի պաշտպանության համար՝ ելնելով կոնկրետ պայմաններից,

քանի որ սույն Հրահանգի 3-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածների 1-ին պարբերության դրույթները կիրառվում են՝ չհակասելով «Տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկատվության տրամադրման համար ընթացակարգ սահմանելու մասին» Խորհրդի 1983 թվականի մարտի 28-ի թիվ 83/189/ԵՀ հրահանգին,

քանի որ անհրաժեշտ է ավտոցիստեռնների՝ ներքևից բեռնման նպատակով սարքավորման համար ներդաշնակեցված տեխնիկական հատկորոշումներ՝ Համայնքում բենզինի և սարքերի ազատ վաճառքի հնարավորություն ու բարձր մակարդակի անվտանգություն ապահովելու համար, և քանի որ այդ տեխնիկական հատկորոշումները ստանդարտացնելու և տեխնիկական առաջընթացին դրանք համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է դրույթ սահմանել,

քանի որ տեխնիկական առաջընթացին սույն Հրահանգի հավելվածները համապատասխանեցնելու հարցում Հանձնաժողովին օժանդակելու համար անհրաժեշտ է հանձնաժողով ստեղծել,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Գործողության ոլորտը**

Սույն Հրահանգը կիրառվում է մեկ բեռնափոխման կայանից մյուս բեռնափոխման կայան կամ բեռնափոխման կայանից լցակայան՝ բենզինի պահման, բեռնման և փոխադրման համար կատարվող աշխատանքների, օգտագործվող հարմարանքների, մեքենաների և նավերի նկատմամբ:

### *Հոդված 2*

#### **Հասկացությունները**

Սույն Հրահանգի նպատակով՝

ա) «բենզին» նշանակում է ցանկացած նավթամթերք՝ հավելումներով կամ առանց դրանց, 27,6 կՊա կամ ավելին՝ ըստ Ռեյդի գոլորշու առաձգականությամբ/հագեցած

գոլորշիների ճնշմամբ, որը նախատեսվում է օգտագործել որպես ավտոմեքենաների համար վառելիք/շարժիչային վառելիք/կայծային վառման մխոցային շարժիչներում՝ բացառությամբ հեղուկ նավթային գազի (ՀՆԳ),

- բ) «գոլորշիներ» նշանակում է բենզինի գոլորշիացման հետևանքով առաջացող ցանկացած շոգենման միացություն,
- գ) «պահեստարան» նշանակում է բենզինը պահելու համար բեռնափոխման կայանում օգտագործվող ցանկացած բարձր ճնշմամբ մետաղական անշարժ պահոց,
- դ) «բեռնափոխման կայան» նշանակում է այն կայանքը, որտեղ բենզինը պահվում և ավտոցիստեռններ, վագոն-ցիստեռններ կամ նավեր է բեռնվում՝ ներառյալ այդ կայանքի տարածքում գտնվող բոլոր պահեստարանները,
- ե) «շարժական կոնտեյներ» նշանակում է մեկ բեռնափոխման կայանից մյուսը կամ բեռնափոխման կայանից լցակայան/ավտոլցման կայան/լցման կետ տեղափոխվող բենզինի համար օգտագործվող ճանապարհային, երկաթուղային կամ ջրային ուղիներով փոխադրվող ցանկացած պահոց/ռեզերվուար/բաք,
- զ) «լցակայան/ավտոլցման կայան/լցման կետ» նշանակում է ցանկացած կայանք, որտեղ բենզինը բարձր ճնշմամբ մետաղական անշարժ պահոցներից լցվում է ավտոմեքենաների տարաներ/բաքեր,
- է) «գոյություն ունեցող» բենզինի պահեստարանները, բեռնման հարմարանքները, լցակայանները և շարժական կոնտեյներները նշանակում է այնպիսի կառուցվածքներ/հարմարանքներ, լցակայաններ և շարժական կոնտեյներներ, որոնք շահագործվել են 10-րդ պարբերության մեջ նշված ամսաթվից առաջ կամ, որի համար 10-րդ պարբերության մեջ նշված ամսաթվից առաջ կառուցման լիցենզիա է շնորհվել կամ շահագործման առանձին լիցենզիա՝ ելնելով ազգային օրենսդրության պահանջներից,
- ը) «նոր» բենզինի պահեստարանների, բեռնման հարմարանքների, լցակայանների և շարժական կոնտեյներների հետ կապված՝ նշանակում է այնպիսի կառուցվածքներ, լցակայաններ և շարժական կոնտեյներներ, որոնք չեն նախատեսվում (է) պարբերությամբ,

- թ) «առավելագույն բեռնում» նշանակում է նախորդ երեք տարվա ընթացքում բեռնափոխման կայանում պահեստարանից կամ շարժական կոնտեյներներ լցակայաններից բեռնված/դատարկված բենզինի տարեկան ընդհանուր առավելագույն քանակը,
- ժ) «գոլորշիների հավաքման կայանք» նշանակում է բենզինի գոլորշիների հավաքման համար սարքավորում, այդ թվում նաև՝ բեռնափոխման կայանում թափարգելի/բուֆերային ռեզերվուար/պահեստարան/պահոցային համակարգ,
- ժա) «նավ» նշանակում է «Ներքին ջրային ուղիների տրանսպորտի նկատմամբ տեխնիկական պահանջներ սահմանելու մասին» Խորհրդի 1982 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 82/714/ԵՏՀ հրահանգի 1-ին գլխում սահմանված ներքին ջրային ուղիների տրանսպորտ,
- ժբ) «ելակետային արժեք» նշանակում է հավելվածներում տեխնիկական չափումների համարժեքության ընդհանուր գնահատման համար տրված ուղեցույց, և այն նորմատիվ ու սահմանային արժեք չէ, որի հիման վրա չափվում է առանձին կայանքների, բեռնափոխման կայանների և լցակայանների աշխատանքը.
- ժգ) «գոլորշիների օժանդակ պահեստարան» նշանակում է բեռնափոխման կայանում հետագայում մեկ այլ բեռնափոխման կայան տեղափոխելու և մեկ այլ բեռնափոխման կայանում հավաքելու համար անշարժ/կոնաձև տանիքով պահոցներում/ռեզերվուարներում/ամբարներում գոլորշիների օժանդակ պահեստարան: Բեռնափոխման կայանում մեկ պահեստարանից մեկ այլ պահեստարան գոլորշիների տեղափոխումը սույն Հրահանգի իմաստով համարվում է գոլորշիների օժանդակ պահեստարան:
- ժդ) «բեռնման հարմարանք» նշանակում է բեռնափոխման կայանում ցանկացած հարմարանք, որտեղ բենզինը կարող է բեռնվել շարժական կոնտեյներներում: Ավտոոցիստեռների համար բեռնման հարմարանքները բաղկացած են մեկ կամ մի քանի “էստակադներից”,
- ժե) «էստակադ» նշանակում է բեռնափոխման կայանում գտնվող ցանկացած կառուցվածք, որտեղ բենզինը կարող է միաժամանակյա բեռնվել մեկ ավտոոցիստեռում:

### Հոդված 3

#### **Բեռնափոխման կայաններում գտնվող պահեստարանները**

1. Պահեստարանները նախագծվում և գործում են/շահագործվում են I հավելվածի տեխնիկական պահանջներին համապատասխան:

Այդ պահանջներով նախատեսվում է նվազեցնել/կրճատել բեռնափոխման կայաններում յուրաքանչյուր պահեստարանում բեռնման և պահելու արդյունքում բենզինի տարեկան ընդհանուր կորուստը՝ 0,01 (կ/կ)% ելակետային արժեքից ցածր՝ ըստ առավելագույն բեռնման կշռի:

Անդամ պետությունները կարող են պահպանել կամ պահանջել առավել խիստ միջոցներ իրենց տարածքում կամ աշխարհագրական տարածքներում, որտեղ ընդունված է, որ նման միջոցներն անհրաժեշտ են մարդու առողջության պաշտպանության համար կամ բնապահպանական նկատառումներից ելնելով՝ կոնկրետ պայմաններից ելնելով:

Բացի բենզինի կորուստների նվազման համար I հավելվածում սահմանված տեխնիկական միջոցներից՝ անդամ պետությունները կարող են ընդունել այլ տեխնիկական միջոցներ, եթե փորձը ցույց է տվել, որ նման այլընտրանքային միջոցներն ունեն առնվազն միևնույն արդյունավետությունը:

Անդամ պետությունները տեղեկացնում են մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին բոլոր առկա միջոցների կամ սույն պարբերության մեջ նշված բոլոր կոնկրետ միջոցների մասին, որոնք նրանք մտադիր են ձեռնարկել, ինչպես նաև դրանք ձեռնարկելու հիմքերի մասին:

2. Առաջին պարբերության դրույթները կիրառվում են՝

ա) նոր հարմարանքների համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից,

բ) գործող հարմարանքների համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից երեք տարի հետո, եթե բեռնափոխման կայանում բեռնված առավելագույն բեռնումը գերազանցում է տարեկան 50 000 տոննան,



գ) առկա հարմարանքների համար 10-րդ հոդվածում նշված ամսաթվից վեց տարի հետո, եթե բեռնափոխման կայանում բեռնված առավելագույն բեռնումը գերազանցում է տարեկան 25 000 տոննան,

դ) բեռնափոխման կայաններում բոլոր այլ գործող պահեստարանների համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից ինը տարի հետո:

#### *Հոդված 4*

### **Բեռնափոխման կայաններում շարժական կոնտեյներների բեռնում և բեռնաթափում**

1. Բեռնման և բեռնաթափման սարքավորանքը նախագծվում և կիրառվում է II հավելվածի տեխնիկական պայմանների համաձայն:

Այդ պահանջներով նախատեսվում է բեռնափոխման կայաններում նվազեցնել/կրճատել շարժական կոնտեյներների բեռնման և բեռնաթափման հետևանքով բենզինի տարեկան ընդհանուր կորուստը՝ 0,005 (կ/կ)% ելակետային արժեքից ցածր՝ ըստ առավելագույն բեռնման կշռի:

Անդամ պետությունները կարող են պահպանել կամ պահանջել առավել խիստ միջոցներ իրենց տարածքում կամ այն աշխարհագրական տարածքներում, որտեղ ընդունված է, որ նման միջոցներն անհրաժեշտ են՝ մարդու առողջության պաշտպանության համար կամ բնապահպանական նկատառումներից՝ ելնելով կոնկրետ պայմաններից:

Բենզինի կորուստների նվազեցման համար I հավելվածում սահմանված տեխնիկական միջոցներից բացի՝ անդամ պետությունները կարող են ընդունել այլ տեխնիկական միջոցներ, եթե փորձը ցույց է տվել, որ նման այլընտրանքային միջոցներն ունեն առնվազն միևնույն արդյունավետությունը:

Անդամ պետությունները տեղեկացնում են մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին բոլոր առկա միջոցների կամ սույն պարբերության մեջ նշված բոլոր կոնկրետ միջոցների մասին, որոնք նրանք մտադիր են ձեռնարկել, ինչպես նաև դրանք ձեռնարկելու հիմքերի մասին: Հանձնաժողովը ստուգում է Պայմանագրի և սույն պարբերության դրույթների հետ այս միջոցների համատեղելիությունը:

## **▼M2**

Ավտոցիստեռնների համար բեռնման հարմարանքներով բոլոր բեռնափոխման կայաններում տեղադրվում է առնվազն մեկ էստակադ, որը բավարարում է IV հավելվածում սահմանված ներքևից բեռնման համար սարքավորման նկատմամբ սահմանված տեխնիկական հատկորոշումները: Հանձնաժողովը պարբերաբար կրկնակի ուսումնասիրության է ենթարկում այդ տեխնիկական հատկորոշումները և, հարկ եղած դեպքում, վերանայում դրանք: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված/նախագծված այդ միջոցները պետք է ընդունվեն 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

## **▼B**

2. Առաջին պարբերության դրույթները կիրառվում են՝

- ա) ավտոցիստեռններում, վագոն-ցիստեռններում և (կամ) բալոններում բեռնելու համար նոր բեռնափոխման կայանների համար՝ 1-ին հոդվածում նշված ամսաթվից սկսած,
- բ) ավտոցիստեռններում, վագոն-ցիստեռններում և (կամ) բալոններում բեռնելու համար գործող բեռնափոխման կայանների համար 10-րդ հոդվածում նշված ամսաթվից երեք տարի հետո, եթե առավելագույն բեռնումը գերազանցում է տարեկան 150 000 տոննան,
- գ) ավտոցիստեռններում, վագոն-ցիստեռններում և (կամ) բալոններում բեռնելու համար գործող բեռնափոխման կայանների համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից վեց տարի հետո, եթե առավելագույն բեռնումը գերազանցում է տարեկան 25 000 տոննան,
- դ) ավտոցիստեռններում և վագոն-ցիստեռններում բեռնելու համար բեռնափոխման կայաններում բոլոր այլ գործող բեռնման հարմարանքների համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից ինը տարի հետո:

3. Տասներորդ հոդվածում նշված ամսաթվից ինը տարի հետո IV հավելվածում սահմանված՝ ներքևից բեռնման համար սարքավորման նկատմամբ ներկայացվող պահանջները կիրառվում են բոլոր բեռնափոխման կայաններում բոլոր ավտոցիստեռնների բեռնման էստակադների նկատմամբ, եթե, 4-րդ պարբերության պայմանների համաձայն, շեղումներ թույլ չեն տրվել:

4. Շեղում կատարելով՝ 1-ին և 3-րդ պարբերությունները չեն կիրառվում՝

ա) տարեկան 10 000 տոննայից պակաս առավելագույն բեռնամաք գործող բեռնափոխման կայանների նկատմամբ և

բ) փոքր հեռավոր կղզիներում տեղակայված՝ տարեկան 5 000 տոննայից պակաս առավելագույն բեռնամաք նոր բեռնափոխման կայանների նկատմամբ:

Այս շեղմամբ մտահոգված/հետաքրքրված՝ անդամ պետությունները 9-րդ հոդվածում նշված հաշվետվությունները ներկայացնելուն առնչվող միջոցառումների միջոցով բեռնափոխման կայանների մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

5. Իսպանիայի Թագավորությունը թույլ է տալիս մեկ տարով շեղվել 2 (բ) պարբերությունում սահմանված ժամանակահատվածից:

#### *Հոդված 5*

### **Շարժական կոնտեյներներ**

1. Շարժական կոնտեյներները նախագծվում և շահագործվում են հետևյալ պահանջներին համապատասխան՝

ա) շարժական կոնտեյներները նախագծվում և շահագործվում են այնպես, որ բենզինի բեռնաթափումից հետո մնացորդային գոլորշիները կասեցվեն կոնտեյներում.

բ) շարժական կոնտեյներները, որոնք լցակայաններին և բեռնափոխման կայանների բենզին են մատակարարում, նախագծվում և շահագործվում են լցակայաններում կամ բեռնափոխման կայաններում՝ պահեստարաններից բանեցրած գոլորշիներ ընդունելու և պահելու նպատակով: Դա պահանջվում է վագոն-ցիստեռնների համար, միայն եթե դրանք բենզին են մատակարարում լցակայաններին կամ բեռնափոխման կայաններին, որտեղ գոլորշիների օժանդակ պահեստարան է օգտագործվում.

գ) բացառությամբ վթարային փականից արտանետման՝ (ա) և (բ) ենթապարբերություններում նշված գոլորշիները կասեցվում են շարժական կոնտեյներում՝ մինչ բեռնափոխման կայանում վերաբեռնում տեղի կունենա:

Եթե բենզինի բեռնաթափումից հետո շարժական կոնտեյները հետագայում բենզինից բացի այլ արտադրատեսակների համար է օգտագործվում, եթե հնարավոր չէ գոլորշիների հավաքում կամ օժանդակ պահեստարանում դրանց պահեստավորում, օդափոխությունը թույլատրվում է այն աշխարհագրական տարածքում, որտեղ արտանետումները չեն կարող զգալիորեն նպաստել բնապահպանական կամ առողջական հիմնախնդիրների առաջացմանը.

դ) անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ ավտոցիստեռնները պարբերաբար ենթարկվեն գոլորշու/շոգու խտության փորձարկումների և, որ պարբերաբար ստուգվի բոլոր շարժական կոնտեյներներում վակուումային վթարային փականների սարքինությունը:

2. Առաջին պարբերության դրույթները կիրառվում են՝

ա) նոր ավտոցիստեռնների, վագոն-ցիստեռնների և (կամ) նավերի համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից սկսած,

բ) առկա վագոն-ցիստեռնների և նավերի համար 10-րդ պարբերության մեջ նշված ամսաթվից երեք տարի հետո, եթե վերջիններս բեռնվում են այն բեռնափոխման կայանում, որի նկատմամբ կիրառվում է 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը,

գ) առկա ավտոցիստեռնների համար, եթե դրանք, IV հավելվածում սահմանված տեխնիկական հատկորոշումների համաձայն, արդիականացված են/հարմարեցված են ներքևից բեռնման համար:

3. Շեղում կատարելով՝ 1-ին պարբերության (ա), (բ) և (գ) ենթապարբերությունների դրույթները չեն կիրառվում այն գոլորշիների կորուստների նկատմամբ, որոնք առաջանում են այն չափման աշխատանքների արդյունքում, որոնց ժամանակ կիրառվում են չափման նշածողեր հետևյալի նկատմամբ՝

ա) առկա/գործող շարժական կոնտեյներներ և

բ) նոր շարժական կոնտեյներներ, որոնք շահագործվում են 10-րդ հոդվածում նշված ամսաթվից հետո սկսած չորս տարվա ընթացքում:

## Հոդված 6

### **Լցակայանների պահեստարաններում բեռները**

1. Բեռնման և պահելու սարքավորանքը նախագծվում և շահագործվում է III հավելվածի տեխնիկական պայմանների համաձայն:

Այդ պահանջներով նախատեսվում է նվազեցնել/կրճատել լցակայաններում պահեստարաններում բեռնման արդյունքում բեռնափակ տարեկան ընդհանուր կորուստը՝ 0,01 (կ/կ)% կշռի ելակետային արժեքից ցածր ըստ առավելագույն բեռնման կշռի:

Անդամ պետությունները կարող են պահպանել կամ պահանջել առավել խիստ միջոցներ՝ իրենց տարածքում կամ աշխարհագրական տարածքներում, որտեղ ընդունված է, որ նման միջոցներն անհրաժեշտ են՝ մարդու առողջության պաշտպանության համար կամ բնապահպանական նկատառումներից՝ ելնելով կոնկրետ պայմաններից:

Բացի բեռնափակ կորուստների նվազման համար III հավելվածում սահմանված տեխնիկական միջոցներից՝ անդամ պետությունները կարող են ընդունել այլ տեխնիկական միջոցներ, եթե փորձը ցույց է տվել, որ նման այլընտրանքային միջոցներն ունեն առնվազն միևնույն արդյունավետությունը:

Անդամ պետությունները տեղեկացնում են մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին բոլոր առկա միջոցների կամ սույն պարբերության մեջ նշված բոլոր կոնկրետ միջոցների մասին, որոնք նրանք մտադիր են ձեռնարկել, ինչպես նաև դրանք ձեռնարկելու հիմքերի մասին:

2. Առաջին պարբերության դրույթները կիրառվում են՝

ա) 10-րդ հոդվածում նշված ամսաթվից սկսած՝ նոր լցակայանների համար,

բ) տասներորդ հոդվածում նշված ամսաթվից երեք տարի հետո.

- տարեկան 1000 խորանարդ մետրից ավելի առավելագույն թողունակությամբ գործող լցակայանների համար,

- գործող այն լցակայանների համար, անկախ դրանց առավելագույն բեռնումից, որոնք մշտապես տեղակայված են բնակելի տարածքներում կամ շահագործվող տարածքներում,

գ) 10-րդ հոդվածում նշված ամսաթվից վեց տարի հետո գործող այն լցակայանների համար, որոնց առավելագույն բեռնումը գերազանցում է տարեկան 500 խորանարդ մետրը,

դ) մնացած բոլոր գործող լցակայանների համար՝ 10-րդ հոդվածում նշված ամսաթվից ինը տարի հետո:

3. Հղում կատարելով՝ 1-ին և 2-րդ պարբերությունները չեն կիրառվում տարեկան 100 խորանարդ մետրից պակաս առավելագույն բեռնմամբ լցակայանների նկատմամբ:

4. Տարեկան 500 խորանարդ մետրից պակաս առավելագույն բեռնմամբ լցակայանների համար անդամ պետությունները կարող են թույլ տալ շեղվել 1-ին պարբերության պահանջներից, եթե տվյալ լցակայանը տեղակայված է այնպիսի աշխարհագրական տարածքում կամ տեղանքում, որտեղ գոլորշու արտանետումները կարող են զգալիորեն նպաստել բնապահպանական կամ առողջական հիմնախնդիրների առաջացմանը:

Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այն տարածքների մանրամասների մասին, որտեղ այդ պետությունները մտադիր են նման շեղում թույլ տալ՝ 9-րդ հոդվածում նշված հաշվետվությունները ներկայացնելուն առնչվող միջոցառումների շրջանակում, ինչպես նաև այդ տարածքներում հետագայում կատարվելիք ցանկացած փոփոխության մասին:

5. Նիդեռլանդների Թագավորությունը կարող է շեղում թույլ տալ 2-րդ պարբերության մեջ սահմանված ժամանակացույցից՝ ենթարկվելով ստորև նշված պայմաններին՝

- սույն Հոդվածով պահանջվող միջոցները կիրառվում են որպես լցակայանների համար առավել ընդգրկուն, գործող ազգային ծրագրի մի մաս, որը միաժամանակ շոշափում է տարբեր բնապահպանական խնդիրներ, ինչպես, օրինակ՝ ջրի աղտոտում, օդի աղտոտում, հողի աղտոտում ու թափոններով աղտոտում, և որի իրականացումը տեղի է ունենում ըստ հստակորեն սահմանված պլանի,

- Ժամանակացույցը կարող է առավելագույնը երկարաձգվել երկու տարով, ընդ որում, բոլոր ծրագրերն ամփոփվում են 2 (դ) պարբերության մեջ սահմանված ժամանակահատվածի համաձայն,
- Հանձնաժողովը ծանուցվում է 2-րդ պարբերության մեջ սահմանված ժամանակացույցից շեղվելու մասին որոշման մասին, այդ թվում նաև՝ շեղման մասշտաբի/շրջանակի և վերջնաժամկետների մասին լրիվ/ամբողջական տեղեկությունների մասին:

6. Իսպանիայի Թագավորությունը և Պորտուգալիայի Հանրապետությունը կարող են թույլ տալ մեկ տարով շեղվել 2(բ) պարբերության մեջ սահմանված ժամանակահատվածից:

## **▼M2**

### *Հոդված 7*

#### **Համապատասխանեցումը տեխնիկական առաջընթացին**

Բացառությամբ II հավելվածի 2-րդ կետում սահմանված սահմանային արժեքների՝ Հանձնաժողովը կարող է սույն Հրահանգի հավելվածները համապատասխանեցնել տեխնիկական առաջընթացին: Սույն Հրահանգի կարևորություն չներկայացնող տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 8(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

## **▼M1**

### *Հոդված 8*

#### **Կոմիտե**

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:

## **▼M2**

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածների 1-ին, 4-րդ և 7-րդ կետերը՝ հաշվի առնելով վերջինիս 8-րդ հոդվածի դրույթները:

## **▼M2**

*Հողված 9*

**Դիտանցումը և հաշվետվությունները ներկայացնելը**

Սույն Հրահանգի իրականացման մասին հաշվետվությունները կազմվում են «Շրջակա միջավայրին առնչվող կոնկրետ հրահանգների իրականացման մասին ստանդարտացման և ռացիոնալիզացման հաշվետվությունների մասին. Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 91/692/ԵՏՀ հրահանգի 5-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն ( [8](#) )): Հանձնաժողովը կարող է, անհրաժեշտության դեպքում, իր առաջին հաշվետվությանը կից սույն Հրահանգի փոփոխության համար առաջարկություններ ներկայացնել, այդ թվում նաև՝ մասնավորապես շրջանակի ընդլայնումը՝ բեռնման հարմարանքների ու նավերի համար գոլորշիների հսկողության և վերականգնման համակարգերը ներառելու համար:

*Հողված 10*

**Ազգային օրենսդրությունում փոխատեղելը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի հետ համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ իրավական նորմեր, կանոնակարգեր և վարչական ակտեր՝ նախքան 1995 թվականի դեկտեմբերի 31-ը: Նրանք անմիջապես դրա մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից այդ միջոցներն ընդունվելիս դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:



## Հոդված 11

### Եզրափակիչ դրույթ

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

#### ՀԱՎԵԼՎԱԾ I

### ԲԵՌՆԱՓՈԽՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՇՏՆՈՒ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Վերգետնյա պահեստարանների արտաքին պատը և տանիքը պետք է պատված լինեն 70 % կամ ավելի ջերմային ճառագայթման ընդհանուր արտացոլմամբ ներկով: Այդ աշխատանքները կարող են պլանավորվել այնպես, որ երեք տարվա ժամանակահատվածում իրականացվեն որպես ամբարների/ռեզերվուարների սովորական պահպանման շղթաների մի մաս: Անդամ պետությունները կարող են այս դրույթից շեղում թույլ տալ, եթե այն պահանջվում է հատուկ պահպանվող տարածքների պաշտպանության համար, որոնք ազգային մարմինների կողմից սահմանվել են որպես այդպիսին :

Սույն դրույթը չի կիրառվում II հավելվածի 2-րդ կետում սահմանված պահանջները բավարարող գոլորշիների հավաքման կայանքի հետ կապված ռեզերվուարների նկատմամբ:

2. Արտաքին լողացող տանիքներով ռեզերվուարները/ամբարները պետք է սարքավորված լինեն առաջնային սահափակադակով՝ ռեզերվուարի պատի և լողացող տանիքի արտաքին ծայրի միջև օղակաձև տարածքը փակելու նպատակով, ինչպես նաև առաջնային սահափակադակի վրա պետք է հարմարեցված լինի երկրորդային սահափակադակ: Սահափակադակները պետք է նախագծվեն այնպես, որ կասեցվի 95 % կամ ավելի գոլորշին՝ համեմատած գոլորշիների կասեցման հսկողություն չունեցող՝

համադրելի ֆիքսված տանիքով ռեզերվուարի/ամբարի հետ (այն միայն վակուումային վթարային փականներով ֆիքսված տանիքով ռեզերվուար է):

3. Բեռնափոխման կայաններում տեղակայված բոլոր նոր պահեստարանները, որտեղ գոլորշիների հավաքումը պահանջվում է սույն Հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն (տե՛ս II հավելված) անհրաժեշտ է՝

ա) II հավելվածի պահանջներին համապատասխան՝ գոլորշիների հավաքման սարքավորանքին կապված՝ ֆիքսված տանիքով ռեզերվուարներ, կամ

բ) արտաքին կան ներքին լողացող տանիքով նախագծված, առաջնային և երկրորդային սահափակադակներով սարքավորված՝ 2-րդ կետում սահմանված շահագործման պահանջները բավարարելու նպատակով:

4. Գործող ֆիքսված տանիքով ռեզերվուարները պետք է՝

ա) կապված լինեն գոլորշիների հավաքման սարքավորանքին՝ II հավելվածի պահանջների համաձայն, կամ

բ) ունեն առաջնային սահափակադակներով ներքին սահող տանիք, որը պետք է նախագծված լինի այնպես, որ կասեցվի 95 % կամ ավելի գոլորշին՝ համեմատած գոլորշիների կասեցման հսկողություն չունեցող՝ համադրելի ֆիքսված տանիքով ռեզերվուարի/ամբարի հետ:

5. Երրորդ և չորրորդ կետերի ներքո նշված գոլորշիների կասեցման հսկողությունների նկատմամբ ներկայացվող պահանջները չեն կիրառվում բեռնափոխման կայաններում ֆիքսված տանիքով ռեզերվուարների նկատմամբ, որտեղ գոլորշիների օժանդակ պահեստարանում պահումը թույլատրվում է II հավելվածի 1-ին կետի համաձայն:

**ԲԵՌՆԱՓՈԽՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԲԵՌՆՄԱՆ և ԲԵՌՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Բեռնաթափվող շարժական կոնտեյներից արտամղված գոլորշիները պետք է բանեցվեն/վերադարձվեն անգոլորշանցիկ գոլորշին չանցկացնող կապող խողովակի/գծի միջոցով գոլորշիների հավաքման սարքավորանք բեռնափոխման կայանում՝ ռեգեներացման համար:

Սույն դրույթը չի կիրառվում վերևից բեռնման ռեգերվուարների նկատմամբ, եթե թույլատրվում է բեռնման այդ համակարգը:

Բեռնափոխման այն կայաններում, որոնց նավերում բենզին է բեռնվում, գոլորշիների այրման կետը/կայանքը կարող է փոխարինվել գոլորշիների հավաքման կայանքով, եթե գոլորշիների հավաքումն անվտանգ է կամ տեխնիկապես անհնարին՝ բանեցված գոլորշու ծավալի պատճառով: Գոլորշիների հավաքման կայանքից մթնոլորտ արտանետումների նկատմամբ պահանջները նույնպես կիրառվում են գոլորշիների այրման կայանքի նկատմամբ:

Տարեկան 25 000 տոննայից պակաս առավելագույն բեռնմամբ բեռնափոխման կայաններում գոլորշիների օժանդակ պահեստարանում պահումը կարող է բեռնափոխման կայանում փոխարինվել գոլորշիների անմիջական հավաքմամբ:

2. Մշակման ընթացքում ջրիկացման/նոսրացման/հեղուկացման համար ուղղված/ճշգրտված՝ գոլորշիների հավաքման կայանքից արտանետման մեջ գոլորշիների միջին կոնցենտրացիան չպետք է գերազանցի մեկ ժամում 35 գ/նորմալ խորանարդ մետրը:

Մինչև 1993 թվականի հունվարի 1-ը տեղակայված՝ գոլորշիների հավաքման սարքավորանքի համար Միացյալ Թագավորությունը կարող է շեղում թույլ տալ սույն հավելվածում սահմանված մեկ ժամում 35 գ/նորմալ խորանարդ մետր սահմանային արժեքից՝ ենթարկվելով ստորև նշված պայմաններին՝

– հարմարանքը բավարարում է սույն հավելվածում սահմանված տեխնիկական

հատկորոշումների համաձայն չափվա՝ մեկ ժամում 50գ/նորմալ խորանարդ մետր սահմանային արժեքը,

- շեղումն ուժի մեջ է՝ սույն Հրահանգի 10-րդ հոդվածում նշված ամսաթվից առավելագույնը տասը տարվա ընթացքում,
- Հանձնաժողովին ծանուցվում է այդ շեղումի ազդեցությունը կրած առանձին հարմարանքների մասին, այդ թվում նաև՝ բենզինի՝ դրանց առավելագույն բեռնման և հարմարանքից գոլորշու արտանետումների մասին տեղեկությունների մասին,

Անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ այդ չափումը և վերլուծական մեթոդներն ու դրանց հաճախականությունը սահմանվեն:

Չափումները պետք է կատարվեն նորմալ առավելագույն բեռնման մեկ լրիվ աշխատանքային օրվա ընթացքում (առնվազն յոթ ժամ):

Չափումները կարող են շարունակական կամ ոչ շարունակական բնույթ կրել: Եթե կիրառվում են ոչ շարունակական բնույթի չափումներ, պետք է կատարվի ժամում առնվազն չորս չափում:

Սարքավորանքի/սարքավորման պատճառով կիրառվող չափման ընդհանուր սխալը, ստուգաճշտման գազը և կիրառվող ընթացակարգը չպետք է գերազանցի չափվող արժեքի 10 %-ը:

Կիրառվող սարքավորանքի/սարքավորման միջոցով պետք է հնարավոր լինի չափել առնվազն 3գ/նորմալ խորանարդ մետր կազմող կոնցենտրացիաներ:

Ճշգրտությունը պետք է կազմի չափվող արժեքի առնվազն 95 %-ը:

3. Անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ կապի խողովակները և խողովակաշարերը պարբերաբար ստուգվեն հոսակորուստների համար:
4. Անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ բեռնման աշխատանքները դադարեցվեն՝ էստակադում գոլորշու հոսակորուստի դեպքում: Նման

դադարեցման աշխատանքների համար սարքավորանքը պետք է տեղակայված լինի էստակադում:

5. Եթե թույլատրվում է շարժական կոնտեյներների վերևից բեռնում, բեռնման ճղափողը պետք է պահվի շարժական կոնտեյների ստորին հատվածին մոտ՝ վերևից լցումից խուսափելու նպատակով:



ՀԱՎԵԼՎԱԾ III

**ԱՅՆ ԼՑԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԲԵՌՆԱՓՈԽՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԲԵՌՆՄԱՆ Ու  
ՊԱՀԵԼՈՒ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՏԵՂ  
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԳՈԼՈՐՇԻՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՊԱՀՈՒՄԸ**

Լցակայաններում և գոլորշիների օժանդակ պահեստարանում պահելու համար կիրառվող ֆիքսված տանիքով ռեզերվուարներում պահելու հարմարանքներում բենզինի առաքման արդյունքում արտամղվող գոլորշիները պետք է անգոլորշանցիկ կապող խողովակի միջոցով վերադարձվեն բենզին առաքող շարժական կոնտեյներ: Բեռնման աշխատանքները կարող են տեղի ունենալ միայն բոլոր միջոցները կիրառելուց և պատշաճ կերպով շահագործելուց հետո:

---

## ՀԱՎԵԼՎԱԾ IV

### ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՎՏՈՑԻՍՏԵՌՆԵՐԻ՝ ՎԵՐԵՎԻՑ ԲԵՌՆՄԱՆ, ԳՈԼՈՐՇԻՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ԳԵՐԲԵՌՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

#### 1. Միացումներ

1.1. Բեռնասլաքի վրա հեղուկի կցորդը պետք է լինի ընդգրկող միակցիչ մասը, որը պետք է միացվի 4 դյույմ API (101,6 մմ) մեքենայի վրա ամրակցված՝ ներպտտված խողովակապտուկի վրա, ինչպես սահմանված է՝

— API Առաջարկվող փորձ 1004

- 7-րդ հրատարակություն, 1988 թվականի նոյեմբեր

MC-306 վառելիքի բաքով ավտոմեքենաների համար վերևից բեռնումը և գոլորշու հավաքումը (Մաս 2.1.1.1 — Վերևից բեռնման համար կիրառվող խողովակապտուկների տեսակ)

1.2. Բեռնման էստակադի գոլորշիների հավաքման ճկափողի վրա գոլորշու հավաքման կցորդիչը պետք է ճկափողի միացման ընդգրկող միակցիչ մաս լինի, որը պետք է միացվի 4 դյույմ API (101,6 մմ)՝ մեքենայի վրա ամրակցված/տեղադրված ճկափողի միացման խողովակապտուկին, ինչպես սահմանված է՝

— API Առաջարկվող փորձ 1004

- Յոթերորդ հրատարակություն, 1988 թվականի նոյեմբեր

MC-306 վառելիքի բաքով ավտոմեքենաների համար վերևից բեռնումը և գոլորշու հավաքումը (Մաս 4.1.1.2 — Վերևից բեռնման համար ադապտեր)

#### 2. Բեռնման պայմանները

2.1. Հեղուկի բեռնման նորմալ չափը պետք է մեկ րոպեում 2 300 լիտր լինի (մեկ րոպեում առավելագույնը 2 500 լիտր) մեկ բեռնասլաքի համար:

2.2. Եթե բեռնափոխման կայանն աշխատում է առավելագույն բեռնվածությամբ, վերջինիս

բեռնման էստակադի գոլորշու հավաքման համակարգը, այդ թվում նաև գոլորշու վերականգնման կետը, կարող են աշխատել գոլորշու հավաքման ադապտերի մեքենայի մասում՝ 55 միլիբար առավելագույն հակաճնշմամբ:

2.3. Բոլոր հաստատված՝ վերևից բեռնող մեքենաներն ունեն նույնականացման տախտակ, որտեղ նշվում է բեռնասլաքների առավելագույն թույլատրելի քանակը, որոնք կարող են միաժամանակ աշխատել, միաժամանակ ապահովելով, որ ոչ մի գոլորշի բաց չթողնվի P և V կափույրների միջոցով, եթե գործարանի առավելագույն հակաճնշումը 55 միլիբար է, ինչպես նշված է 2.2 կետում:

### **3. Մեքենայի վերգետնյա/գերլցման հայտնաբերման կապը**

Բեռնման էստակադում (ուղանցում) պետք է գերլցման հայտնաբերման հսկողության կետ լինի, եթե միացված է մեքենային, պետք է ապահովի առանձին մասերի խափանման թույլտվության ազդանշանը՝ բեռնման համար հնարավորություն տալու համար, ապահովելով, որ գերլցման սենսորները բարձր մակարդակ չհայտնաբերեն:

3.1. Մեքենան պետք է միացված լինի էստակադի վրա հսկիչ կետին 10 սոնացցից բաղկացած արդյունաբերական ստանդարտով էլեկտրական միակցիչին: Շտեկերային միակցիչը պետք է տեղադրվի մեքենայի վրա, և լիցքավորիչը (ադապտերը) պետք է կցվի հպակային հարակցիչ, խրոցակ.անջատասարքի բույնին՝ էստակադի վրա տեղադրված հսկիչ կետին միացված բարակ մետաղալարին:

3.2. Մեքենայի վրա բարձր մակարդակի դետեկտորները պետք է լինեն կամ 2 լարով թերմիստորային տվիչներ, 2 լարով օպտիկական սենսորներ, 5 լարով օպտիկական սենսորներ կամ համադրելի համարժեքներ՝ պայմանով, որ համակարգում առանձին մասերի խափանում չկա: (Ծանոթագրություն՝. թերմիստորները պետք է ունենան բացասական ջերմաստիճանային գործակից:)

3.3. էստակադի հսկողության կետը պետք է 2 և 5 լարով մեքենաների համակարգերի համար հարմար լինի:

3.4. Մեքենան պետք է միացվի/կապվի էստակադին գերլցման սենսորների ընդհանուր



մինուսի լարի միջոցով, որոնք պետք է միացվեն 10 սոնացցին՝ շտեկերային միակցի վրա մեքենայի հենասարքի միջոցով: Ադապտերի վրա սոնացից 10-ը պետք է կապվի/միացվի հսկիչ կետի բլոկին, որը պետք է կապվի էստակադի հատակին:

3.5. Բոլոր հաստատված վերևից բեռնման մեքենաները պետք է ունենան նույնականացման տախտակ (տե՛ս 2.3), որտեղ նշվում է տեղադրված գերլցման հայտնաբերման սենսորների տեսակը (այսինքն՝ 2 կամ 5 լար):

#### **4. Միացումները տեղը**

4.1. Բեռնման էստակադում հեղուկի բեռնման և գոլորշու հավաքման սարքերի նախագծումը պետք է հիմնված լինի հետևյալ մեքենաների միացման ռեժիմի վրա:

4.1.1. Հեղուկի ադապտերի կենտրոնական գծի բարձրությունը պետք է լինի՝ առավելագույնը՝ 1,4 մետր (չբեռնավորված), նվազագույնը՝ 0,5 մետր (բեռնավորված), նախընտրելի բարձրությունը՝ 0,7-1,0 մետր):

4.1.2. Ադապտերների հորիզոնական ինտերվալը պետք է 0,25 մետրից ոչ պակաս լինի (նախընտրելի նվազագույն ինտերվալը՝ 0,3 մետր է):

4.1.3. Բոլոր հեղուկ ադապտերները պետք է տեղադրվեն 2,5 մետր երկարությունը չգերազանցող համակարգում:

4.1.4. Գոլորշու հավաքման ադապտերը պետք է տեղադրվի հեղուկ ադապտերների աջ կողմում և ոչ ավելի, քան 1,5 մետր բարձրության վրա (չբեռնավորված) և ոչ ավելի, քան 0,5 մետր բարձրության վրա (բեռնավորված):

4.2. Վերգետնյա/գերբեռնման միակցիչը պետք է տեղադրվի հեղուկի և գոլորշիների հավաքման ադապտերների աջ կողմում և ոչ ավելին, քան 1,5 մետր բարձրության վրա (չբեռնավորված) և ոչ ավելի, քան 0,5 մետր բարձրության վրա (բեռնավորված):

4.3. Վերը նշված միացումները պետք է տեղադրվեն բացառապես մեքենայի կողքին:

#### **5. Անվտանգության նկատառումներով բլոկավորումներ և պահպանիչ սարքեր**

5.1. *Վերգետնյա/գերբեռնման/գերլցման հայտնաբերում*

Բեռնումը/լցումը չպետք է թույլ տրվի, եթե թույլտվության ազդանշան է տրվում համակցված վերգետնյա/գերբեռնման հսկիչ կետի կողմից:

Գերլցման պայմանում կամ մեքենայից վերգետնյա կորստի դեպքում էստակադի վրա հսկիչ կետը պետք է էստակադում փակի բեռնման հսկիչ փականը:

## 5.2. Գոլորշիների հավաքման հայտնաբերում

Բեռնումը չպետք է թույլ տրվի, եթե գոլորշիների հավաքման ճկափողը միացված է մեքենային և, եթե արտամղված գոլորշիների՝ գործարանի գոլորշիների հավաքման համակարգ մեքենայից հոսելու ազատ անցում կա:

---

(1) ՊՏ No C 227, 03.09.1992թ., էջ 3 և ՊՏ թիվ C 270, 06.10.1993թ., էջ 12:

(2) ՊՏ թիվ C 73, 15.03.1993թ., էջ 6:

(3) Եվրոպական պառլամենտի 1994 թվականի հունիսի 24-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 194, 19.07.1993թ., էջ 325), Խորհրդի 1993 թվականի փետրվարի 4-ի ընդհանուր դիրքորոշում (դեռ չի հրապարակվել Պաշտոնական տեղեկագրում) և Եվրոպական պառլամենտի 1994 թվականի մարտի 9-ի որոշում (ՊՏ Թիվ C 91, 28.03.1994թ., էջ 82): Հաստատվել է 1994 թվականի դեկտեմբերի 2-ին (ՊՏ Թիվ C 342, 20.12.1993թ., էջ 15): 1994 թվականի նոյեմբերի 8-ի Հաշտեցման կոմիտեի համատեղ տեքստ:

(4) ՊՏ թիվ C 112, 20.12.1973թ., էջ 1, ՊՏ Թիվ C 139, 13.06.1977թ., էջ 1. ՊՏ Թիվ C 46, 17.02.1983թ., էջ 1 և ՊՏ Թիվ C 328, 07.12.1987թ., էջ 1:

(5) ՊՏ թիվ L 242, 30.08.1991թ., էջ 1:

(6) ՊՏ թիվ L 109, 26.04.1983թ., էջ 8: Հանձնաժողովի թիվ 92/400/ԵՏՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 221, 06.08.1992թ., էջ 55):

(7) ՊՏ թիվ L 301, 28.10.1982թ., էջ 1:

(8) ՊՏ թիվ L 377, 31.12.1991թ., էջ 48: